ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ
Փակ Բաժնետիրական Ընկերություն

АРДШИНИНВЕСТБАНК
Закрытое Акционерное Общество

ARDSHININVESTBANK
Close Joint Stock Company

## «ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15-Ը ՄԱՐՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2 Լ

### «ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ, ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ՎՆԱՍՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ, ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» և «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքները, «Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի 03.11.2007թ. ««Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2007 թվականի ինն ամսվա ֆինանսական արդյունքները ամփոփելու և ինն ամսվա ֆինանսական հաշվետվությունների և հաշվապահական հաշվեկշռի հաստատման» մասին թիվ 11-Լ որոշումը «Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը

ո ր ո շ ու մ է՝

1. Հաստատել «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ 2007 թվականի ֆինանսական հաշվետվությունները, այդ թվում «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ 2007 թվականի տարեկան հաշվեկշիռը 2007 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ համաձայն կից հավելվածների:

2. «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ 2007 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստացված զուտ շահույթի մնացած մասը՝ 1 177 548 750,90 (մեկ միլիարդ մեկ հարյուր յոթանասունյոթ միլիոն հինգ հարյուր քառասունութ հազար յոթ հարյուր հիսուն դրամ իննսուն լումա) հայկական դրամ գումարը (հարկերի վճարումից հետո մնացած), բաշխել հետևյալ կերպ՝

ա) պահուստային ֆոնդի (գլխավոր պահուստի) մասհանում (սույն որոշման 2-րդ կետում նշված գումարի 5 տոկոսի չափով)՝ 58 877 437,55 (հիսունութ միլիոն ութ հարյուր յոթանասունյոթ հազար չորս հարյուր երեսունյոթ դրամ հիսունհինգ լումա) հայկական դրամ, որը «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովի 03.11.07թ. թիվ 11-Լ որոշմամբ 2007թ. առաջին ինն ամիսների ֆինանսական արդյունքների ամփոփման մասին որոշմամբ միջանկյալ շահույթի բաշխման ժամանակ պահուստային ֆոնդին մասհանած գումարի հետ միասին կազմում է «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ 2007 թվականի ֆինանսական գործունեության արդյունքում ստացված զուտ շահույթի 5 տոկոսը.

բ) մնացած 1 118 671 313,35 (մեկ միլիարդ մեկ հարյուր տասնութ միլիոն վեց հարյուր յոթանասունմեկ հազար երեք հարյուր տասներեք դրամ երեսունհինգ լումա) հայկական դրամ գումարը ուղղել «Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Նախորդ տարիների շահույթ/վնաս» հաշվեկշռային հաշվին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2008թ. մարտի 18-ից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ — Խ. ԶԱՔԱՐՅԱՆ

Ստորագրվել է ժողովի նախագահողի կողմից
2008թ. մարտի 18-ին, ք. Երևան